

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ապահովագրական դեպքեր են համարվում հետևյալ իրադարձությունները

- Զրդեհ, կայծակի հարված, գազի պայթյուն,
- Ջրից առաջացած վնաս, այդ թվում ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և հակահրդեհային համակարգերի վթարի հետևանքով այդ համակարգերի ջրի կամ գոլորշու հասցրած վնասները, ինչպես նաև ապահովագրված տարածքից դուրս տեղի ունեցած վթարների հետևանքով ապահովագրված գույքին հասցված վնասները`
 - Ծախսերը` կապված ապահովագրված բնակարաններում անմիջականորեն գտնվող ջրատար, ջեռուցման, կոյուղու և հրդեհային համակարգերի հանկարծակի վնասի վերացման հետ,
 - Յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով խողովակների փոփոխման անհրաժեշտության դեպքում հատուցվում են խողովակների վնասված հատվածի երկու գծամետրի փոփոխության արժեքը չգերազանցող ծախսերը,
 - Խողովակաշարերին կցված համակարգերի և սարքերի (ներառյալ ծորակները, բաքերը, լոգարանները, ջերմափոխանակիչ, ջեռուցման կաթսաները, բոյլերները և այլն) փոփոխման անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար վերանորոգման և այդպիսի համակարգերի փոփոխման ծախսերը հատուցվում են Պայմանագրի ընդհանուր ապահովագրական գումարի 0.1%-ը չգերազանցող չափով,
 - Անմիջականորեն ապահովագրված բնակարանում գտնվող անհատական ջեռուցման համակարգերով անհատական կառույցներում -30°C ցածր օդի ջերմաստիճանի դեպքում խողովակների սառեցումից առաջացած ծախսերը:
- Կոտրանքով գողություն, կողոպուտ,
- Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ,
- Բախում, հարված:

Ապահովագրական պատահարներից բացառություններ

Ապահովագրական դեպք չի համարվում`

- Ապահովագրության վայր հանդիսացող տարածքի կտուրի և/կամ միջբլուկային (միջպանելային) կարերով կամ չփակված պատուհաններով, դռներով և այլ անցքերով անձրևի, ձյան, որոտի, կեղտի ներթափանցման հետևանքով առաջացած վնասը,
- Ապահովագրված բնակարանի վերանորոգման կամ վերակառուցման անցկացման արդյունքում առաջացած վնասը,
- Ապահովագրված տարածքից կամ շինություններից դուրս գտնվող խողովակաշարերի և դրանց հետ կապված համակարգերի և սարքերի մշակման կամ փոխարինման հետ կապված ծախսերը,
- Ապահովագրի կողմից վթարային կամ հնացած ջրատարի, ջեռուցման, կոյուղու և հրդեհային համակարգերի շահագործման, Ապահովագրի կողմից այդ համակարգերի շահագործման նորմատիվային ժամկետները խախտելու կամ չպահպանելու դեպքում առաջացած վնասը,
- Տարածքների ներսում երկարատև խոնավության հետևանքով առաջացած վնասը (բորբոս, սուճկ և այլն),
- Բազմաբնույթ ռազմական գործողությունների, զորաշարժերի, միջոցառումների և դրանց հետևանքների, քաղաքացիական պատերազմի, հատուկ կամ արտակարգ դրության հայտարարման դեպքում առաջացած վնասը,
- Միջուկային պայթյունի, ռադիացիայի կամ ռադիոակտիվ վարակման հետևանքով առաջացած վնասը,
- Զրդեհային անվտանգության կանոնների, տեխնիկական սպասարկման կանոնների խախտման կամ չպահանման արդյունքում առաջացած վնասը,
- Դիտավորյալ գործողությունների արդյունքում առաջացած վնասը,
- Բարոյական վնասը, բաց թողնված օգուտը, լճացումը, եկամտի կորուստը և այլ կողմնակի վնասները,
- Էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցման կամ տատանման արդյունքում առաջացած վնասը:

Ի՞նչ պետք է անել Ապահովագրական պատահարի դեպքում

- Անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում), սակայն ոչ ուշ քան ապահովագրության պայմաններում սահմանված ժամկետներում (ոչ ուշ քան 20 րոպեի ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում սահմանված կարգով Ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուն խոչընդոտող հանգամանքների վերացումից ոչ ուշ, քան 20 րոպեի ընթացքում) հայտնել Ապահովագրական ընկերությանը ապահովագրական պատահարի առաջացման մասին՝ զանգահարելով (+374 60) 27-57-57 հեռախոսահամարով,
- Ապահովագրական պատահարի առաջացման մասին հայտնել Բանկին,
- Ապահովագրական ընկերությանը ներկայացնել ապահովագրության պայմաններով սահմանված ուղեկցող փաստաթղթեր:

Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրական հատուցումը կատարվում է համաձայն Ապահովագրական ընկերության Ապահովագրության պայմանների: Ապահովագրական պայմանագրի գործողությունը կանոնակարգող կանոններն և հատուցման ընթացակարգին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ՝ այցելելով ապահովագրական ընկերության ստորև նշված ինտերնետային կայք:

«ՌԵՍՈ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 62, տարածք 93-93/3
Հեռ.՝ (+374 60) 27-57-57, www.reso.am